

Ընդհանուր և մոլեկուլային գենետիկայի լաբորատորիա

Ընդհանուր և մոլեկուլային գենետիկայի լաբորատորիայի հիմնական ուղղություններն են էկոգենետիկան և գենաթունաբանությունը: Հետազոտությունները իրականացվում են քրոմոսոմային խաթարումների, միկրոկորիզների, ԴՆԹ-կոմեաների, FISH, MN-FISH, Comet-FISH և տրադեսկանցիայի գենային մուտացիաների մեթոդների կիրառմամբ *in vitro* և *in vivo*:

Ուսումնասիրվում են կորիզում քրոմոսոմների տեղակայման ազդեցությունը քրոմոսոմային խաթարումների բաշխման վրա և ԴՆԹ-ի նուկլեոտիդային կրկնությունների (CNV) անկայունությունը մարդու բջիջներում: Հետազոտվում է բուսական լուծամզվածքների թունաբանական ակտիվությունը, դեղաբանական հատկությունների բացահայտման նպատակով: Իրականացվում է միկոտոքսինների գենա- և բջջաթունային հատկությունների ուսումնասիրությունը: Հետազոտվում է Հայաստանի տարբեր տարածքների հողի և ջրի նմուշների գենաթունայնությունը՝ կախված դրանցում եղած ծանր մետաղների և այլ աղտոտիչների պարունակությունից: Կատարվում է հողերի տարբեր շերտերի հնէաբուսաբանական ուսումնասիրություն: Իրականացվում է հայկական խաղողի և ծիրանի բջջասաղմնաբանական և ձևաչափական հետազոտություն: Կատարվում է հայկական աբորիգեն խաղողի և գինու պոլիֆենոլների ու անտոցիանների քանակական վերլուծություն սպեկտրոֆոտոմետրիկ մեթոդով:

Ուսումնասիրվում է խաղողի աբորիգեն և նոր սորտերի կայունությունը միլդյու և օիդիում հիվանդությունների նկատմամբ, դրանց գենոտիպային ու ֆենոտիպային բնութագիրը և կատարվում է ռեգիստենտ լոկուսների սեկվենավորում:

Աշխատակիցներ՝

1. Հարությունյան Ռուբեն Միքայելի - դեկ.՝ գլխ.գիտ.աշխ., կ.գ.դ., պրոֆեսոր, ներքին համատեղ

2. Հովհաննիսյան Գալինա Գեորգիի - ավ. գիտ. աշխ., կ.գ.դ., դոցենտ, ներքին համատեղ

3. Աղաջանյան Էվելինա Արտաշի - ավ. գիտ. աշխ., կ.գ.թ., հիմնական

4. Աթոյանց Անահիտ Լեոնի- գիտ. աշխ., կ.գ.թ., հիմնական

5. Ավալյան Ռիմա Էդուարդի- գիտ. աշխ., կ.գ.թ., հիմնական

6. Նեբիշ Աննա Անդրեյի - գիտ. աշխ., կ.գ.թ., ներքին համատեղ

7. Մարգարյան Քրիստինե Մերյոժայի - գիտ. աշխ., կ.գ.թ., հիմնական

8. Բաբայան Նելլի Սամվելի - կրտ.գիտ.աշխ., կ.գ.թ., հիմնական

9. Ծովյանին Էլիզա Արմենի - ավ.լաբ., հիմնական

10. Միմոնյան Աննա Էդիկի - ավ.լաբ., հիմնական